ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 օգոստոսի 2016թ. թիվ 261-Ա

Է.ՇԵԿՈՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴՍԵՂԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հաշվի առնելով Է.Շեկոյանին դիմումը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Էդուարդ Շեկոյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Դսեղի Հ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:

2. Էդուարդ Շեկոյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի օգոստոսի 15-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2016թ. օգոստոսի 12
ք.Վանաձոր